

Համաձայնագիր

Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի աղետների կառավարման թիմի (ԱԿԹ) և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության միջև աղետների կառավարման, պատրաստվածության և արձագանքման գործողությունների վերաբերյալ

Նախաբան

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գործառույթներն են՝ պետական գործակալությունների և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում արտակարգ իրավիճակներում և աղետների կանխարգելման ու արձագանքման փուլերի ընթացքում, քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության վերաբերյալ օրենքների նախագծերի մշակումը, փրկարարական գործողությունների համար պատասխանատվությունը և այլն:

Աղետների կառավարման թիմը (ԱԿԹ) Հայաստանի Հանրապետությունում

ԱԿԹ-ի առաջնային նպատակն է պատրաստել և ապահովել լրացուցիչ աջակցություն, ինչպես նաև արդյունավետ և նպատակաուղղված արձագանք պետական մակարդակով ՄԱԿ-ի համակարգի և աղետների/արտակարգ իրավիճակների դեպքում այլ հիմնական դերակատարների կողմից: Թիմը պետք է ապահովի միջազգային աջակցության համակարգման աշխատանքները՝ ուղղված արտակարգ իրավիճակների արձագանքման, վերականգնման գործողությունների և աղետների հետևանքների նվազեցման համար պատասխանատու պետական մարմին:

1. Նպատակ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը և ՄԱԿ-ի աղետների կառավարման թիմը, հաշվի առնելով իրենց առաջնային նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև պատասխանատվությունները, սույնով համաձայն են պաշտոնական հարաբերություններ հաստատել ներկայիս Համաձայնագրի շրջանակներում, որը հնարավորություն կտա նախապես ստեղծել հնարավոր աղետներին ԱԿԹ-ի արձագանքման գործողությունների կառավարման համար անհրաժեշտ համակարգ և գործընթացներ: Սա նաև կներառի գնահատման համակարգերի, տեղեկատվության կառավարման, հաղորդակցության միջոցների և

համակարգման վերաբերյալ կետեր, ինչպես նաև կերաշխավորի աղետների դեպքում համալիր աշխատանքների իրականացումը:

2. Համաձայնագիր

«Վ» արտակարգ իրավիճակների նախարարությունը և ՄԱԿ-ի աղետների կառավարման թիմը համաձայն են ստանձնել դերերը և պարտավորությունները թե՛ աղետների պատրաստվածության, թե՛ արձագանքման փուլերում: Կողմերը համաձայն են համագործակցել երկու հիմնական ոլորտներում՝

- Աղետների կառավարման հետ կապված տեղեկատվության փոխանակում, ներառյալ պատրաստվածության փուլ
- Արտակարգ իրավիճակների դեպքում համագործակցության իրականացում ներառյալ նախապատրաստական փուլը

2.1 Աղետների պատրաստվածության փուլ: «Վ» արտակարգ իրավիճակների նախարարությունը պատրաստ է՝

- ա. պարբերաբար տրամադրել տեղեկատվություն աղետների կառավարման ազգային համակարգին, ներառյալ պետական համակարգում կատարվող ցանկացած տիպի փոփոխությունների, կարևորագույն պաշտոններ զբաղեցնող անձանց փոփոխման և (կամ) առկա իրավական ակտերում կատարվող փոփոխությունների վերաբերյալ;
- բ. տրամադրել տեղեկատվություն վտանգների, ռիսկերի և սպառնալիքների կամ ցանկացած այլ տվյալների վերաբերյալ, ներառյալ տեխնիկական և ֆինանսական պաշարների հասանելիությանն առնչվող տեղեկատվություն, որն անհրաժեշտ կլինի ԱԿԹ-ի նախնական պլանների մշակման և պարբերաբար թարմացման համար:
- գ. ապահովել «Վ» արտակարգ իրավիճակների նախարարության անձնակազմի հասանելիությունը և մասնակցությունը ՄԱԿ-ի ԱԿԹ-ի կողմից կազմակերպված միջոցառումներին, սեմինարներին և դասընթացներին:

2.2 ՄԱԿ-ի ԱԿԹ-ն պատրաստ է՝

- ա. ապահովել պարբերաբար թարմացում՝ կապված ՄԱԿ-ի ԱԿԹ-ի դերի և մանդատի հետ, ներառյալ ինչպիսի աջակցություն կառաջարկվի Հայաստանի կառավարությանը՝

- ցուցաբերել օգնություն/վերականգնման աշխատանքների ոլորտներում, որոնք ՄԱԿ-ի ԱԿԹ-ի գործակալությունները կարող են առաջարկել;
- ցուցաբերել օգնություն միջազգային աջակցություն ստանալու հայտի գործընթացների հետ;
- ցուցաբերել օգնություն ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ իրազեկվածության արագ ապահովում ՄԱԿ-ի համակարգի շրջանակներում

բ. ապահովել մասնակցություն և պարբերաբար խորհրդատվություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ ՄԱԿ-ի ԱԿԹ-ի պատրաստվածության պլանավորման գործընթացի ժամանակ, ներառյալ սեմինարներ, դասընթացներ և սցենարային վարժություններ:

3. Աղետների դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ ստացվում է մոտեցող աղետների վերաբերյալ զգուշացում

3.1 ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը պատրաստ է՝

ա. աղետների կամ ցանկացած այլ դեպքի մասին անմիջապես տեղեկացնել ՄԱԿ-ի ԱԿԹ-ին: Սա իրականացվում է ՄԱԿ-ի ԱԿԹ-ի և ՀՀ ԱԻՆ-ի համաձայնագրով << Հայաստանում վտանգավոր իրավիճակների ժամանակ հաղորդակցության և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ >>: Վերջինը հանդիսանում է սույն համաձայնագրի ինտեգրված մասը,

բ. տրամադրում է պարբերաբար թարմացումներ աղետի վայրից, ներառյալ աղետի վայրի հասանելիության և աղետի հասցրած վնասի վերաբերյալ առաջնային տեղեկատվություն, ՄԱԿ-ի ԱԿԹ-ին տրամադրում է խորհրդատվություն՝ կապված միջոցների տեղակայման հետ,

գ. տրամադրում է անհրաժեշտ աջակցություն՝

1. Իրավիճակի և կարիքների միասնական գնահատման կազմակերպում, ներառյալ համապատասխան մարդկային ռեսուրսների տրամադրում, տուժած տարածքների նյութատեխնիկական ապահովման տվյալների մասին խորհրդատվություն,

2. Սովորական իրավիճակային զեկույցի վերաբերյալ վերլուծություններ և տեղեկատվության հավաքում,

3. Միջազգային աջակցության հայտի պատրաստման գործընթացին օժանդակություն և մասնակցություն,

4. ՄԱԿ-ի ԱԿԹ-ի տեղեկատվության փոխանակման և համակարգման գործընթացներին մասնակցություն և օժանդակություն,

5. Արտաքին գործերի նախարարության հետ սերտ համագործակցելով տուժած բնակչության համար մարդասիրական օգնության ստացման և բաշխման աշխատանքների կազմակերպում, ներառյալ օգնության միջոցներ (նաև բժշկական օգնություն) և պարագաներ, մաքսազերծում, անցագրի ստացման գործընթացին աջակցություն, ժամանակավոր պահեստավորում և այլ մարդասիրական օգնության անխափան տրամադրումը:

3.2 ՄԱԿ-ի ԱԿԹ-ն պատրաստ է՝

1. ՀՀ ԱԻՆ հետ իրականացնել աղետներին վերաբերող տեղեկատվության փոխանակում, ընդունում, հավաքաբերում,

2. Կազմակերպել և իրականացնել իրավիճակի և կարիքների միասնական գնահատում,

3. Պատրաստել պարբերական իրավիճակային զեկույցներ, ամփոփ հաշվետվություններ, մամլո ասուլիսներ, երաշխավորել երկրի ներսում սերտ կապը միջազգային հանրության հետ ՄԱԿ-ի հաղորդակցական ալիքներով դրսի դռներին հետ կապ հաստատելու միջոցով (www.reliefweb.int, և այլ ալիքներ):

4. Օգնել իրականացնել հասանելի միջազգային օգնությունը կառավարությանը և տուժած բնակչությանը տրամադրելու աշխատանքներում, ներառյալ անհապաղ օգնության տրամադրում,

5. Օժանդակել արտաքին միջազգային օգնության մոբիլիզացման և համակարգման գործընթացներին (միջազգային SARs-INSARAG, UNDAC առաքելություններ, OSOCC-ի ստեղծում),

6. Օժանդակել Հայաստանի կառավարությանը միջազգային օգնության հայտի պատրաստման և մշակման, դռնոր կազմակերպություններին աջակցման և արագ արձագանքման գործողություններին ուղղված փրկարարական մոբիլիզացման գործընթացներին,

7. Կազմակերպել տեղեկատվության փոխանակման և համակարգման ֆորումներ խուսափելու համար ազգային և միջազգային ուժերի կողմից իրականացվող գործողությունների կրկնօրինակումից,

8. Օժանդակել ժամանակի մոտեցման գործընթացին, երբ միջազգային արտակարգ իրավիճակների արձագանքը կնվազեցվի կամ ավարտին կհասցվի մասնավորապես, երբ <<արտաքին>> միջազգային օգնության տրամադրման հարցերով զբաղվող անձնակազմը ներկա է, երբ և ինչպես պետք է իրականացնել <<ելք>> ռազմավարությունը:

4. Հատուկ դրույթներ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը և ՄԱԿ-ի աղետների կառավարման թիմը կգործեն միմյանց հետ խորհրդակցելով, ինչը հնարավորություն կտա սահմանել Համաձայնագրի նպատակներին հասնելու ճանապարհները:

Համաձայնագրի կիրառման և բովանդակության հետ կապված ցանկացած տիպի բանավեճ պետք է լուծվի խորհրդակցությունների և փոխհամաձայնության միջոցով:

5. Ուժի մեջ մտնելը և ժակետները

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, հինգ տարի ժամանակով:


Սույն համաձայնագիրը չի հանդիսանում միջազգային պայմանագիր և նրա դրույթները չեն ազդում ՀՀ օրենսդրության և միջազգային պայմանագրերի դրույթների վրա:

Ստորագրված է 14 փետրվարի 2011թ., Երևան քաղաքում, երկու բնագրերով՝ հայերեն և անգլերեն: Տարաձայնությունների դեպքում մեկնաբանության հիմք է անգլերենը:


ՄԱԿ-ի Հայաստանյան մշտական
ներկայացուցիչ,

ՄԱԶԾ մշտական համակարգող

ՀՀ ԱԻ նախարար



Տկն. Դաֆինա Գերչևա



Պրն. Արմեն Երիցյան